

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Նկարում կետի n° բարձրությունն է նշված U տառով.

- 1) բացարձակ
- 2) ուղղաձիգ
- 3) հարաբերական
- 4) միջին



2 Ո՞րն է ամենափոքր մասշտաբը.

- 1) 1 : 560 000
- 2) 1 : 5 600 000
- 3) 1 : 5 600
- 4) 1 : 56 000

3 Երկու կետերի հեռավորությունը քարտեզում 32 սմ է, իսկ քարտեզի մասշտաբը՝ 1 : 4 800 000: Կետերի միջև իրական հեռավորությունը կլինի.

- 1) 3072 կմ
- 2) 6144 կմ
- 3) 1536 կմ
- 4) 2000 կմ

4 Արեգակի ճառագայթներն ուղղահայաց ընկնում են հասարակածի վրա.

- 1) սեպտեմբերի 23-ին և դեկտեմբերի 22-ին
- 2) մարտի 21-ին և սեպտեմբերի 23-ին
- 3) հունիսի 22-ին և դեկտեմբերի 22-ին
- 4) մարտի 21-ին և հունիսի 22-ին

5

Բնութագրումով որոշել հողմահարման տեսակը.

Այդ հողմահարումը տեղի է ունենում ապարի և օդի գազերի միջև կատարվող փոխազդեցության և ջրային տարբեր լուծույթների միջոցով, ընդ որում՝ դրա հետևանքով ապարների հատկանիշները փոխվում են, առաջանում է նոր ապար: Հողմահարման n° տեսակն է.

- 1) ֆիզիկական
- 2) երկրաբանական
- 3) քիմիական
- 4) օրգանական

6

Աշխարհագրական n° լայնություններում է ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը մեծ.

- 1) հասարակածային
- 2) արևադարձային
- 3) բևեռային
- 4) բարեխառն

7

Կլիմայի այն տիպը, որին բնորոշ են ցուրտ ու չոր ձմեռները և տաք ու խոնավ ամառները, կոչվում է.

- 1) ցամաքային
- 2) մուսսոնային
- 3) ծովային
- 4) միջերկրածովային


8

Ռուսական «Վոստոկ» գիտակայանը Հարավային բևեռից հեռու է 1221 կմ: Աշխարհագրական n° լայնության վրա է գիտակայանը.

- 1) հվ. լ. 81°
- 2) հվ. լ. 79°
- 3) հվ. լ. 69°
- 4) հվ. լ. $77,5^{\circ}$


9 Ո՞ր քամիներն են պատկերված նկարում.

- 1) մուսսոններ
- 2) լեռնահովտային քամիներ
- 3) բրիզներ
- 4) պասսատներ



10 Ո՞ր նկարում է պատկերված երկրագնդի վրա քաղցրահամ և աղի ջրերի ճիշտ հարաբերակցությունը.

- 1) Գ
- 2) Դ
- 3) Ա
- 4) Բ



11 Խաղաղ օվկիանոսի ծովային հոսանքներ են.

- 1) Մուսսոնայինը և Ֆոլկլենդյանը
- 2) Պերուականը և Արևելաավստրալականը
- 3) Բենգեյանը և Գվիանականը
- 4) Բրազիլականը և Կանարյանը

12 **Ի՞նչն է բնորոշ տունդրայի բնական զոնային.**

- 1) ծառային բուսականության տարածումը
- 2) խոտակեր խոշոր կենդանիների տարածումը
- 3) պոդզոլային հողերի գերակշռությունը
- 4) հողի բազմամյա սառածությունը

13 **Բնութագրումով որոշել ոլորտը.**

Վերնոլորտի սահմաններում՝ 25–30 կմ բարձրության վրա է այդ գագաթից բաղկացած շերտը, որը կլանում է Արեգակից եկող՝ կյանքի համար վտանգավոր ուլտրա-մանուշակագույն ճառագայթները: Գագային ո՞ր շերտն է.

- 1) ջրածնի
- 2) օզոնի
- 3) թթվածնի
- 4) ածխաթթու գազի

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Արևադարձներից դեպի բարեխառն գոտիներ փչող քամիները կոչվում են մուսսոններ:
- 2) Արևադարձներում օդի վերընթաց շարժման հետևանքով առաջանում են ցիկլոններ:
- 3) Տաք և սառը օդային զանգվածների շփումից առաջացած մրրկահողմը Հյուսիսային Ամերիկայում կոչվում է տորնադո:
- 4) Տարվա ընթացքում իրենց ուղղությունը երկու անգամ փոխող քամիները կոչվում են թայֆուններ:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Որքան արևի ճառագայթների անկման անկյունը փոքր է, այնքան ստացվող ջերմությունը քիչ է:
- 2) Ամբողջ տարվա ընթացքում մթնոլորտային ցածր ճնշման գոտիներ են առաջացել արևադարձային և բևեռային լայնություններում:
- 3) Որքան օդը սառն է, այնքան մթնոլորտային ճնշումը ցածր կլինի:
- 4) Ամբողջ տարվա ընթացքում մթնոլորտային բարձր ճնշման գոտիներ են առաջացել հասարակածային և բարեխառն լայնություններում:

16 Կանադական արկտիկական արշիպելագի կղզիներ են.

- 1) Բաֆինի Երկիրը և Վիկտորիան
- 2) Պուերտո Ռիկոն և Ճամայկան
- 3) Նյուֆաունդլենդը և Վանկուվերը
- 4) Կուբան և Հայիթին

17 Ո՞ր տարածքների կլիման մուսսոնային չէ.

- 1) Փոքր Ասիա թերակղզի և Բալկանյան թերակղզի
- 2) Ամուր և Յանցզի գետերի միջին ու ստորին հոսանքների ավազան
- 3) Կորեա թերակղզի և Կյուսյու կղզի
- 4) Հինդուստան թերակղզի և Հոնսյու կղզի

18 «Գետ – հորդացման սեզոն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Օրինոկո – ձմեռ
- 2) Զամբեզի – ամառ
- 3) Եփրատ – ձմեռ
- 4) Հուանհե – գարուն

19 Մագնիսական հակումը արևելյան է՝ $3^{\circ} 35'$, իսկական ազիմուտը՝ 176° :
Մագնիսական ազիմուտը կլինի.

- 1) $179^{\circ} 25'$
- 2) $179^{\circ} 35'$
- 3) $172^{\circ} 65'$
- 4) $172^{\circ} 25'$

20

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Դեկտեմբերին ցերեկը Հարավային բևեռում ավելի կարճ է, քան Երևանում:
- 2) Արեգակի ճառագայթները հս. լ. 25°-ի տակ տարվա մեջ մեկ անգամ ընկնում են ուղղահայաց:
- 3) Հունիսի 22-ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:
- 4) Մարտի 21-ը կոչվում է գարնանային գիշերահավասարի օր:

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Լեռն ի վար իջնելիս մթնոլորտային ճնշումը նվազում է:
- 2) Անամպ օրերին ամենուր օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվում է վաղ առավոտյան:
- 3) Սառը օդի ճնշումն ավելի մեծ է, քան տաք օդինը:
- 4) Անտիցիկլոնի կենտրոնում ճնշումն ավելի ցածր է, քան ծայրամասերում:

22

Աֆրիկայի մերձարևադարձային մշտականաչ անտառների ու թփուտների բնական զոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տարածված բուսատեսակներն են բաոբաբը, ֆիկուսը, կաուչուկատու հնեան:
- 2) Տարածված կենդանատեսակներն են էմու ջայլամը, դինգո շունը և բադակտուցը:
- 3) Մթնոլորտային տեղումներն առավելապես թափվում են ձմռանը:
- 4) Հողային ծածկում գերակշռում են շագանակագույն և մոխրագորշ հողերը:

23


Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Պարսից ծոցը Օմանի ծոցից բաժանվում է Բոսֆորի նեղուցով:
- 2) Աշխարհում մակընթացության ամենաբարձր ալիքը գրանցվել է Հուդզոնի ծոցում:
- 3) Բիսկայան ծոցի ջրերը ողողում են Պիրենեյան թերակղզու հարավային ափերը:
- 4) Մեծ Ավստրալական և Կարպենտարիա ծոցերը պատկանում են Հնդկական օվկիանոսի ավազանին:

24

Քարտեզում Ա տառով ն^օր հրվանդանն է նշված.

- 1) Հարավարևելյան
- 2) Ստիվի Փոյնթ
- 3) Բայրոն
- 4) Յորք



25

Քարտեզում Ը տառով ն^օր նավահանգիստն է նշված.

- 1) Մելբուռն
- 2) Բրիսբեն
- 3) Փերթ
- 4) Սիդնեյ

26

Ներկայումս երկրագնդի բնակչության թիվը տարեկան աճում է.

- 1) 75–85 մլն–ով
- 2) 100–110 մլն–ով
- 3) 50–60 մլն–ով
- 4) 60–70 մլն–ով

27

Բնակչության ամենօրյա տեղաշարժը մի բնակավայրից մեկ այլ բնակավայր աշխատանքի կամ ուսման նպատակով, որը հատկապես տարածված է քաղաքային ագլոմերացիաներում, կոչվում է.

- 1) ներքին միգրացիա
- 2) ճոճանակային միգրացիա
- 3) սեզոնային միգրացիա
- 4) էմիգրացիա

28 **Բնութագրումով որոշել երկիրը.**

*Եվրոպական այս երկիրը էլք չունի դեպի Համաշխարհային օվկիանոս:
Մակերևույթը լեռնային է, հարուստ է ռեկրեացիոն ռեսուրսներով: Տնտեսության
միջազգային մասնագիտացման ճյուղերից են պանրագործությունը, ժամացույց-
ների արտադրությունը: Ո՞րն է այդ երկիրը.*

- 1) Շվեդիան
- 2) Ավստրիան
- 3) Ֆրանսիան
- 4) Շվեյցարիան

29 **Երկրի տարածքը կազմում է 96 400 կմ², բնակչության թիվը՝ 12 050 000 մարդ:
Բնակչության միջին խտությունը կլինի.**

- 1) 155 մարդ/կմ²
- 2) 6025000 մարդ/կմ²
- 3) 11953600 մարդ/կմ²
- 4) 125 մարդ/կմ²

30 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Բնակչության տեղաբաշխման օրինաչափություններից է նրա խտության աճը
ծովերից կամ օվկիանոսներից հեռանալուն զուգընթաց:
- 2) Զարգացած վերամշակող արդյունաբերություն ունեցող տարածքներին բնորոշ է
բնակչության մեծ խտությունը:
- 3) Երկրագնդի բնակչության ընդամենը մի փոքր մասն է ապրում Արևելյան և
Հարավային Ասիայում:
- 4) Բնակչության խտությունը տեղանքի բացարձակ բարձրության մեծացմանը
զուգընթաց ավելանում է:

31 **Աշխարհում ամենամեծ թվով ներգաղթածներ ունեցող երկրներից են.**

- 1) ԱՄՆ-ը և Գերմանիան
- 2) Հնդկաստանը և Ուզբեկստանը
- 3) Չինաստանը և Մոլդովան
- 4) Ճապոնիան և Կորեան

32 Սլավոնական լեզվախմբին պատկանող լեզուներ *չեն*.

- 1) ուկրաիներենը և չեխերենը
- 2) հունարենը և վրացերենը
- 3) ռուսերենը և բելառուսերենը
- 4) լեհերենը և չեխերենը

33 Ո՞ր երկրների համար է նավթի հանույթը միջազգային մասնագիտացման ճյուղ.

- 1) Շվեդիա և Իրան
- 2) Լեհաստան և Իրաք
- 3) Վենեսուելա և Նիգերիա
- 4) Ալժիր և Եթովպիա

34 Հիմնականում ներմուծվող հումքի և վառելիքի հիման վրա պողպատ արտադրող երկրներ են.

- 1) Լեհաստանը և Բրազիլիան
- 2) ԱՄՆ-ը և Ուկրաինան
- 3) Ճապոնիան և Իտալիան
- 4) Չինաստանը և ՌԴ-ն

35 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Պողպատի ձուլման ձեռնարկությունները կառուցվում են գիտական կենտրոնների մոտ:
- 2) Ջրաէլեկտրակայանները հիմնականում կառուցվում են հարթավայրային գետերի վրա:
- 3) Աէկներն ապահովում են աշխարհում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին:
- 4) Ծանր գունավոր մետաղների ձուլումը կողմնորոշվում է դեպի հումքի բազաները:

36

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) 1960–ական թթ. տեղի ունեցած «Կանաչ հեղափոխությունը» բնորոշ էր զարգացած երկրներին, իսկ 1980–ական թթ. տեղի ունեցած երկրորդ «Կանաչ հեղափոխությունը»՝ զարգացող երկրներին:
- 2) Բոլոր բնական զոնաների խտաբնակ շրջաններին և մերձքաղաքային գոտիներին բնորոշ է էքստենսիվ գյուղատնտեսությունը:
- 3) Գյուղատնտեսության կապիտալիստական–ձեռնարկատիրական սոցիալտնտեսական տիպը բնորոշ է հիմնականում Աֆրիկայի, Հարավային Ամերիկայի երկրներին:
- 4) Գյուղատնտեսության զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշներից առավել կարևոր է մեկ շնչի հաշվով գյուղմթերքների արտադրությունը:

37

«Անասնապահության մասնագիտացման ճյուղ – երկիր» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) ոչխարաբուծություն – Դանիա
- 2) մսատու անասնապահություն – Արգենտինա
- 3) կաթնատու անասնապահություն – Լիբիա
- 4) խոզաբուծություն – Ինդոնեզիա

38

ՆԱԵԿ-ի անդամ երկրներ են.

- 1) Բրազիլիան և Արգենտինան
- 2) ԱՄՆ–ը և Ռուսաստանը
- 3) Ալժիրը և Լիբիան
- 4) Լիբանանը և Սիրիան

39

Ո՞ր երկու պետություններն են Արևմտյան Եվրոպա տարածաշրջանում.

- 1) Մոնակո և Անդորրա
- 2) Լիխտենշտեյն և Սան Մարինո
- 3) Լիխտենշտեյն և Լյուքսեմբուրգ
- 4) Սան Մարինո և Լյուքսեմբուրգ

40

Կենտրոնական Ասիայի երկրներից Ռուսաստանին սահմանակից է.

- 1) Ղազախստանը
- 2) Ղրղզստանը
- 3) Տաջիկստանը
- 4) Ուզբեկստանը

41

Բնութագրումով որոշել պետությունը.

Հարավարևմտյան Ասիայի այս պետությունն աշխարհի առաջատարներից է բորատի ու քրոմիտի պաշարներով: Բնակչության գերակշիռ մասը դավանում է մահմեդականության սուննի ուղղությունը: Բնակչության թվով երկրորդ ազգը քրդերն են: Ո՞րն է այդ պետությունը:

- 1) Իրանը
- 2) Իրաքը
- 3) Թուրքիան
- 4) Սաուդյան Արաբիան

42

Գերմանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 2) Արտաքին առևտրի շրջանառության ծավալով առաջինն է աշխարհում:
- 3) Խոշոր նավահանգիստներից են Համբուրգը և Ռոստոկը:
- 4) Գետային ցանցը խիտ է, սակայն գետերը նավարկելի չեն:

43

Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Եզրային ծալքաբեկորավոր լեռներից ամենաբարձրը Կորդվաց լեռնաշղթան է:
- 2) Միջնաշխարհի կենտրոնական մասով զուգահեռականի ուղղությամբ ձգվում է Արևելյան (Հայկական) Տավրոսի լեռնաշղթան:
- 3) Արևելքից եզրավորվում է Փոքր Կովկասի լեռնային համակարգը կազմող լեռնաշղթաներով:
- 4) Հյուսիսային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների մարզը շուրջ 500 կմ ձգվում է Սև ծովի հարավային ափերի երկայնքով:

44

Հայկական լեռնաշխարհի բուսականության վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Անտառների ստորին հարկում տիրապետում են լայնատերև ծառատեսակները, իսկ վերին հարկում՝ փշատերևները:
- 2) 4000 բուսատեսակներից 200-ը էնդեմիկ են, այսինքն՝ հանդիպում են միայն Հայկական լեռնաշխարհում:
- 3) Լեռնաշխարհի փոքր տարածքի պատճառով բուսականությունը բազմազան չէ:
- 4) Արարատյան, Նախիջևանի և Ուրմիայի գոգավորությունների նախալեռնային գոտում տարածված է լեռնաչորասեր՝ ֆրիգանոիդ բուսականությունը:

45 **Ընտրել «հանքաքար – հանքավայր» գույգերից ճիշտը.**

- 1) երկաթ – Ալավերդի
- 2) նեֆելինային սիենիտ – Եղեգնաձոր
- 3) ոսկի – Աբովյան
- 4) պղնձահրաքար – Կապան

46 **Ի՞նչն է բնորոշ ՀՀ չոր մերձարևադարձային կլիմայի տիպին.**

- 1) Հունվարին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է $+10^{\circ}$ -ի շուրջ:
- 2) Տարածվում է 1500-2000 մ բարձրություններում:
- 3) Ձմեռը կարճատև է և մեղմ:
- 4) Տեղումների միջին տարեկան քանակը հասնում է 800-900 մմ-ի:

47 **Ո՞ր գույգի քաղաքները մինչև Հայաստանի խորհրդայնացումը քաղաքի կարգավիճակ ունեին.**

- 1) Դիլիջանը և Իջևանը
- 2) Գորիսը և Գավառը
- 3) Վարդենիսը և Մարտունին
- 4) Չարենցավանը և Հրազդանը

48 **ՀՀ սննդի արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը չունի արտահանման նշանակություն.**

- 1) հանքային ջրերի
- 2) գինու-կոնյակի
- 3) մրգի և բանջարեղենի պահածոների
- 4) մսի և մսամթերքի

49 **Ո՞ր մարզի տարածքում կա արգելոց.**

- 1) Արարատի
- 2) Արագածոտնի
- 3) Արմավիրի
- 4) Տավուշի

50


Տավուշի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մակերևույթը հարավից հյուսիս աստիճանաբար բարձրանում է:
- 2) Հովտային շրջաններում լայն տարածում ունեն սողանքները:
- 3) Բարձրաչափական նիշերի տարբերությունը մոտ 2600 մ է:
- 4) Արևմտյան սահմանների երկայնքով ձգվում է Գուգարաց ծալքաբեկորավոր լեռնաշղթան:

51

Ո՞ր լեռնագագաթն է քարտեզում նշված *Բ* տառով.

- 1) Վարդենիս
- 2) Գոզի
- 3) Ծղուկ
- 4) Ուրծ



52

Ո՞ր հանքավայրն է քարտեզում նշված *Ե* տառով.

- 1) Ագարակի
- 2) Քաջարանի
- 3) Կապանի
- 4) Շահումյանի

53 Ո՞ր երկրներն են աղքատ ջրաէներգետիկ ռեսուրսներով.

- 1) Ռուսաստանը և Թուրքիան
- 2) Վրաստանը և Նորվեգիան
- 3) Կանադան և Տաջիկստանը
- 4) Սաուդյան Արաբիան և Լիբիան

54 Տրվածներից ո՞րը անապատների աճման հիմնական պատճառ չէ.

- 1) արոտների գերարածեցումը
- 2) անտառների հատումը
- 3) գյուղատնտեսական հողատարածքների գերբեռնվածությունը մշակաբույսերով
- 4) ագրոանտառաբարելավումը

55 Բոլոր տեսակի կենդանի օրգանիզմների ժառանգական հատկանիշների ու հակումների ամբողջությունը կոչվում է.

- 1) էկոհամակարգ
- 2) գենոֆոնդ
- 3) ժառանգականություն
- 4) կենսացենոզ

56 Գրել միագործառութային քաղաքների համարները.

- | | |
|-------------|--------------|
| 1) Կապան | 5) Մեծամոր |
| 2) Քաջարան | 6) Նոր Հաճըն |
| 3) Ծաղկաձոր | 7) Իջևան |
| 4) Հրազդան | 8) Արմավիր |

57 Գրել այն լճերի համարները, որոնք Ասիայում են.

- | | |
|-----------|--------------|
| 1) Պոռպո | 5) Աթաբասկա |
| 2) Մեոյալ | 6) Սևանա |
| 3) Ուրմիա | 7) Օնեգա |
| 4) Թանա | 8) Իսիկ Կուլ |

58 Գրել այն երկրների համարները, որոնք ունեն 100 մլն-ից ավելի բնակչություն.

- | | |
|--------------|--------------|
| 1) Արգենտինա | 5) Ավստրալիա |
| 2) Բրազիլիա | 6) Ֆրանսիա |
| 3) Գերմանիա | 7) Իրան |
| 4) Կանադա | 8) Նիգերիա |

59

Գրել այն քաղաքների համարները, որոնք Հարավարևմտյան Ասիայի նավահանգիստներ են.

- | | |
|-----------------|-------------|
| 1) Քաբուլ | 5) Դամասկոս |
| 2) Սպահան | 6) Անկարա |
| 3) Բենդեր Աբբաս | 7) Մբադան |
| 4) Կարաչի | 8) Մումբայ |

60

Գրել Միջերկրական ծովում գտնվող կղզիների համարները.

- | | |
|--------------|-------------|
| 1) Կիպրոս | 5) Թասմանիա |
| 2) Սիցիլիա | 6) Սարդինիա |
| 3) Շրի Լանկա | 7) Հաիթի |
| 4) Իսլանդիա | 8) Կորսիկա |

61

Գրել այն տարածաշրջանների համարները, որոնք խաղողագործության մեջ մասնագիտացած չեն.

- | | |
|-------------------|-----------------------------|
| 1) Շիրակի դաշտ | 5) Լոռվա սարահարթ |
| 2) Արփայի հովիտ | 6) Եղվարդի սարավանդ |
| 3) Սևանի ավազան | 7) ՀՀ հյուսիսարևելյան մասեր |
| 4) Արարատյան դաշտ | 8) Զանգեզուրի հարավ (Մեղրի) |

62

ՀՀ տրված քաղաքների համարները դասավորել ըստ դրանց միջով հոսող գետերի հետևյալ հաջորդականությամբ՝ Աղստև, Որոտան, Դեբեդ.

- 1) Սիսիան
- 2) Իջևան
- 3) Ալավերդի

63

Արևմտյան Եվրոպայի տրված պետությունները դասավորել բնակչության թվաքանակի աճման կարգով.

- 1) Ավստրիա
- 2) Գերմանիա
- 3) Լյուքսեմբուրգ
- 4) Ֆրանսիա

64

Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լ. 22º, արլ. ե. 61º: Որոշել տվյալ վայրի ժամային գոտին:

(65-66) Երկրի բնակչության թիվը 8 մլն է, բնական աճի գործակիցը՝ 8 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 40 650 մարդ, արտագաղթը՝ 29 800 մարդ.

65

Որոշել բնակչության մեխանիկական աճը:

66

Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

(67-68) Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 24° է, իսկ գագաթին՝ 6°: Ստորոտը ծովի մակարդակից 1800 մ բարձրության վրա է (հաշվարկը կատարել 6°-ով):

67 Որոշել Լեռան հարաբերական բարձրությունը:

68 Որոշել Լեռան բացարձակ բարձրությունը:

69

Հայկական լեռնաշխարհի գետերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Սև ծովի ավազանին պատկանող գետերից է Ճորոխը:
- 2) Կուր գետի նշանավոր վտակներից են Խրամը, Դեբեդը, Աղստը:
- 3) Ունեն հիմնականում ձնաանձրևային և մասամբ ստորգետնյա սնում:
- 4) Հորդանում են առավելապես ամռանը:
- 5) Արևմտյան Եփրատը սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից, Արևելյան Եփրատը՝ Ծաղկավետ լեռներից:
- 6) Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս գետերի միախառնումից առաջանում է Շատ-Էլ-Արաբ գետը:

70

Աշխարհի բնակչության ռասայական կազմի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Ժամանակակից իսառը ռասաների ներկայացուցիչները լայն տարածում ունեն Լատինական Ամերիկայում:
- 2) Նեգրոիդ մեծ ռասայի տարածման հիմնական շրջանը Հարավային Ասիան է:
- 3) Ռասաների բնութագրիչ հատկանիշերն են լեզուն, մշակույթը և կրոնը:
- 4) Ռասայական հատկանիշերի ձևավորման վրա ավելի շատ ազդեցություն են թողել սոցիալ-տնտեսական և քաղաքական, քան բնական գործոնները:
- 5) Մոնղոլոիդ ռասային բնորոշ են դեղնավուն մաշկը, սև և ուղիղ մազերը, աչքերի նեղ բացվածքը:
- 6) Բնակչության ռասայական և ազգային կազմերի սահմանները մշտապես համընկնում են: